Սաստիկ

Մարիետ Սիմոնյան

Մատենիկ

մայրենիի գիրք-տետր

I դասարանցիների համար

Նկարիչ՝ Ռուբեն Գրիգորյան



ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի

©«Ծաղիկ» հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 1994

Օգտագործելու է թույլատրված
ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի
հոգաբարձական խորհրդի կողմից

Սոֆիետ Սիմոնյան **Մատենիկ. Մայրենիի գիրք-տետր առաջին դասարանցիների համար.-Եր. «Շաղիկ», 1994թ.**

Խմբագիր՝ Սուսան Մարկոսյան
Գեղ. խմբագիր և նկարիչ՝ Ռուբեն Գրիգորյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գեղեցիկ Մարգարյան
Տեխն. խմբագիր՝ Շուրա Հայրյան
Էջադրումը՝ Սերգեյ Զորաբով

Տպագրության է ստորագրված՝ 16.08.1994 թ.: Չափս՝ 60x84 1/8: Թուղթ՝ օֆսեթ №1:: Տպագրությունը՝ օֆսեթ: Հրատ. 11.5 մամուլ: Տպաքանակը՝ 5000: Պատվեր՝ 042: Գինը՝ պայմանագրային:

ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի «Շաղիկ» հրատարակչություն, Երևան, Հարավ-արևմտյան կանգված, Բ-1 թաղամաս, Ա.Բաբաջանյանի փողոց:

Տպագրված է «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի տպարանում. Երևան, Հարավարևմտյան կանգված, Բ-1 թաղամաս, Բաֆֆու փողոց 4:

Աա (այբ)	Խխ (խե)	Չչ (չա)
Բբ (բեն)	Ծծ (ծա)	Պպ (պե)
Գգ (գիմ)	Կկ (կեն)	Ջջ (ջե)
Դդ (դա)	Հհ (հո)	Ռռ (ռա)
Եե (եչ)	Ձձ (ձա)	Սս (սե)
Զզ (զա)	Ղղ (ղատ)	Վվ (վեվ)
Էէ (է)	Ճճ (ճե)	Տտ (տյուն)
Ըը (ըթ)	Մմ (մեն)	Րր (րե)
Թթ (թո)	Յյ (հի)	Ցց (ցո)
Ժժ (ժե)	Նն (նու)	ՈՒու (ու)
Իի (ինի)	Շշ (շա)	Փփ (փյուր)
Լլ (լյուն)	Ոո (վո)	Քք (քե)

ԵՎև (և)	Օօ (օ)	Ֆֆ (ֆե)

ԳԱՅԼ ՈՒՏՈՂ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Մի անգամ նապաստակը գնաց գյուղ, որ գայլ որսա, և հենց աղվեսին տեսավ, պո՛ւկ՝ փախավ:



Ինչպիսի՞ն է այս նապաստակը:

Այստեղ արտագրիր բառեր, որոնց մեջ շարժում կա:

ԱՄՊ-ՓՈՒՉԻԿԸ

Ամպը վերևում կապույտ փուչիկի պես կախվել էր: Եվ հանկարծ պայթեց, ու անձրև եկավ:

Կարո՞ղ ես արտագրել՝ բառերի մի մասը նկարելով. այսպես՝ -ը

Ստացվեց: Շա՛տ ապրես:

Այստեղ գրիր բառեր, որոնց մեջ ջուր չկա.

ԼՈՒՍԻՆՆ ՈՒ ԾԱՌԸ

Լուսինը խճճվել էր ծառի ճյուղերի մեջ և չէր կարողանում դուրս գալ: Ծառը ամուր բռնել էր լուսնին և չէր թողնում, որ հեռանար:

Ինչպիսի՞ն է այս լուսինը:

Ինչպիսի՞ն է այս ծառը:

Այժմ փորձիր շարունակել.

խճճված թել	*ամուր սևան*
խճճված	*ամուր*
խճճված	*ամուր*
խճճված	*ամուր*

ՓԻՂՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Ասում են, թե տարիներ առաջ մի մուկ մտել է փղի ականջը: Փիղը վախից լեղաճաք է եղել, փախել է, ընկել մի մեծ փոս: Մուկը փորելով դուրս է եկել, իսկ փիղը փոսում սատկել է: Դրա համար էլ փղերը վախենում են մկներից:



Էլ ո՞վ է ումից վախենում.

Փիղը վախենում է մկից:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ապակին վախենում է _____ :

Խոտը վախենում է _____ :

Պաղպաղակը վախենում է _____ :

Գրիչը վախենում է _____ :

Ատամը վախենում է _____ :

Ծաղիկը վախենում է _____ :

Արևը վախենում է _____ :

Անձրևը վախենում է _____ :

Իսկ այստեղ գրիր անվախ բառեր.

_____

_____

_____

ՓԻՂԸ

Ասում են, թե մարդիկ առաջ տունը պահպանելու համար փիղ էին պահում, բայց գիշերը ինչ մահճակալ դնում էին փղի տակ, առավոտը ջարդվում էր: Մարդիկ անիծում են ու ասում.

- Կանգնած քնես:

Եվ փիղը մինչև հիմա կանգնած է քնում:



Փորձիր հորինել.

ՓՂԻ ԱԿԱՆՋՆԵՐՈՎ ՄՈՒԿԸ

Իսկ հիմա նկարիր այդ մկանը, լա՞վ:

ՄԱՐԴՈՒԿԸ

Մարդուկը, հենված մի փափուկ բարձի, հենված ու պառկած մի հրաշք բարձի, երակ է տեսնում ու հետն էլ լալիս, չգիտեմ ինչու լալիս է, լալիս... Ինքներդ իմացեք, ինչո՞ւ է լալիս...



Արտագրիր և վերջում ավելացրու մեկ նախադասություն.

Այստեղ գրիր ուրախ բառեր.

Իսկ այստեղ գրիր լացող բառեր.

ԼՌՈՒԹՅՈՒՆ

Մի գետակ կար: Նրա վրա միշտ աղմկում էին նավերը: Իսկ գետակը չէր սիրում աղմուկ: Եվ մի օր ալեկոծվեց, և նավերը սուզվեցին: Եվ այդ օրվանից գետակում տիրում էր լռություն:



Արտագրիր՝ բառերի մի մասը նկարելով.

Գրիր բառեր, որոնք կարող են ալեկոծվել.

Հիմա գրիր բառեր, որոնք կարող են սուկվել.

ԻՆՉԻՑ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՏՂԱՆԵՐԸ

Տղաները աղջիկներին պաշտպանելու համար են: Տղաները պատրաստված են ուժից և ճարպկությունից:



Իսկ ինչի՞ց են պատրաստված աղջիկները:

Այստեղ գրիր աղջիկ բառեր.

Այստեղ գրիր տղա բառեր.

ԳԱՐՈՒՆ Է ՍԻՐՈՒՆ

Մի օր դուրս եկավ շողշողուն արևը և բոլորին բարևեց: Երբ նրա ձայնը լսեց գարունիկ քնքուշ աղջիկը, նա էլ դուրս եկավ: Արև քույրը երբ տեսավ գարունիկին, շատ ուրախացավ, որ գարունիկ աղջիկը դուրս եկավ:

Արտագրիր, վերջում ավելացրու մեկ նախադասություն.

Այժմ փորձիր նոր վերնագիր գտնել.

Կարո՞ղ ես շարունակել.

շողշողուն արև	*քնքուշ աղջիկ*
շողշողուն _____	*քնքուշ* _____
շողշողուն _____	*քնքուշ* _____
շողշողուն _____	*քնքուշ* _____

Հիմա գրիր այն բառերը, որոնց մեջ ծաղիկ կա.

ԼՈՒՍԻՆԸ

Լուսինը երկնքում լողում-սայթաքում էր, իսկ աշխարհը դեռ քնած էր: Աստղերը փայլում էին և լույս էին տալիս երկնքում:



Արտագրիր և վերջում ավելացրու մեկ նախադասություն.

Այստեղ արտագրիր լույս տվող բառերը.

Իսկ այստեղ գրիր ուրիշ լույս տվող բառեր.

ԱՐԵՎ-ԱՔԱՂԱՂԸ ԵՎ ԱՔԱՂԱՂ-ԱՐԵՎԸ

Արևը, ինչպես աքաղաղ, կախվել էր երկնքում և ծուղրուղու էր կանչում, արթնացնում էր մարդկանց: Իսկ աքաղաղը ներքևում քայլում էր, և նրա բակմագույն փետուրները, ինչպես արև, լույս էին տալիս:



Արտագրիր բաց թողնված բառը կամ նոր բառ գտիր.

Արևը, ինչպես _____, կախվել էր երկնքում և ծուղրուղու էր կանչում, արթնացնում էր մարդկանց: Իսկ աքաղաղը ներքևում քայլում էր, և նրա _____ փետուրները, ինչպես _____, լույս էին տալիս:

Կարո՞ղ ես շարունակել.

բակմագույն փետուրներ

բակմագույն _____

բակմագույն _____

բակմագույն _____

Այժմ փորձիր շարունակել.

արթնանալ - կարթնել

բակմագույն - գույնզգույն

աքաղաղ - _____

գեղեցիկ - _____

պատուհան - _____

կայրանալ - _____

ՆԿԱՐԸ

Գիշերը և գետը չէին տարբերվում իրարից, ոնց որ գետ չլիներ, այլ միայն գիշեր լիներ: Ծառը քնած էր, լուսինը երկնքում լույս էր տալիս, և նրա ստվերը ընկել էր գետի մեջ:



Այստեղ նկարիր ինչ ուզում ես:

Ուզո՞ւմ ես պատմել քո նկարածի մասին:

Պատմիր, լա՞վ:

Այստեղ գրիր բառեր, որոնք չես կարող նկարել.

ԵԹԵ ԵՍ ՄԵԾ ԼԻՆԵԻ

Եթե ես մեծ լինեի, երեխաներին չէի թողնի՝ ծաղիկները քաղեին, չէի թողնի՝ թիթեռներին բռնեին, որովհետև թիթեռը մի օր է ապրում: Կսովորեցնեի չբռնել:



Իսկ հիմա ինձ պատմիր.

ԵՐԲ ԵՍ ՓՈՔՐ ԷԻ

Այստեղ գրիր փոքր բառեր.

Իսկ այստեղ գրիր մեծ բառեր.

ԹԻԹԵՌՆ ՈՒ ԾԱՌԸ

Թիթեռը փախավ անձրևից, մտավ ծառի տերևների տակ: Ծառը իր տերևներով փաթաթեց թիթեռին, և նրանք բարեկամացան: Թիթեռը միշտ թռչում էր ամեն տեղ և ինչ որ տեսնում էր, գալիս պատմում էր ծառին:

Ի՞նչ էր պատմում թիթեռը ծառին:

Ինչպիսի՞ն էր թիթեռը:

Ինչպիսի՞ն էր ծառը:

Արտագրիր իրար բարեկամ բառերը.

ԼՈՒՍԻՆՆ ՈՒ ԾԻՏԸ

Ծիտիկը երազում էր տեսնել լուսնին, ու մի օր էլ որոշեց չքնել: Ծառի ճյուղին նստած՝ սպասում էր լուսնյակի երևալուն: Շուտով երևաց լուսինը:

- Ի՜նչ գեղեցիկ է ու մեծ,- զարմացավ ծիտիկը:

Նա երկար ժամանակ հրճվանքով նայում էր լուսնին: Նրա աչքերը կամաց-կամաց փակվեցին:

Փորձիր շարունակել.

Ի՞ՆՉ ՏԵՍԱՎ ՁԻՏԸ ԵՐԱԶՈՒՄ

Իսկ հիմա փորձիր շարունակել.

լուսինը և ծիտը, ծտոտ լուսինը _____

ՀՐԱՇՔԸ

Կար-չկար, մի աղջիկ կար: Այդ աղջիկը ուներ մի ծառ: Այդ ծառը հրաշք էր: Աղջիկը ամեն օր ջրում էր այդ ծառը ու սպասում, թե ե՛րբ կծաղկի: Մի գարնան գեղեցիկ օր աղջիկը դուրս եկավ ու տեսավ, որ իր ծառին ծաղկել էր մի մեծ, կարմրաթուշ խնձոր: Եվ աղջիկը շատ ուրախացավ:

Շարունակիր այս պատմությունը.

Հանկարծ այս խնձորը...

Գրիր հրաշք բառեր.



ԹԱՐՍ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ

Թարս լույս տվող հեռուստացույցը ամեն ինչ հակառակն է լույս տալիս: Մարդը հետ է քայլում, գլխի վրա է կանգնում ու չի շնչում: Ծաղիկները հողի տակն են, ձկները թռչում են, իսկ թռչունները ջրում լողում են: Ես չեմ ուզում ամեն ինչ թարս լույս տվող հեռուստացույց ունենալ:

Կարո՞ղ ես շարունակել.

Մարդը գլխի վրա է կանգնում:

Ձկները թռչում են:

Արևը _____

Մկները _____

Տները _____

Բադիկները _____

Կարո՞ղ ես պատասխանել.

Ինչպիսի՞ ձայն ունի թարս աքաղաղը:

_____

Ի՞նչ կա թարս բաժակի մեջ:

_____

Ի՞նչ է անում թարս ամպը:

_____

Ի՞նչ համ ունի թարս պաղպաղակը:

_____

Ի՞նչ է սիրում թարս տղան:

_____

Իսկ հիմա էջը կարդարիր թարս նկարներով:

Ապրե՛ս:

Մի օր ես ռադիոն միացրի և քիչ էր մնում ծիծաղից ուշաթափվեի: Հաղորդավարը ծրագիրը հաղորդում էր երգելով, համերգների փոխարեն բառաչում էին կովերը, հավերը խրխնջում էին, ոչխարները՝ հաչում, իսկ շները մլավում էին:



Այս նախադասությունը հաղորդել են թարս ռադիոյով: Կարդա բարձրաձայն.

Իլերիս ընամակերաբ, ամիի սև կնձ իմ բիբրքատեի քսկեդ մեմտապկ:

Այստեղ գրիր՝ ի՞նչ են հաղորդել.

Հիմա ինքդ գրիր մի նախադասություն և այն հաղորդիր թարս ռադիոյով:

Հաղորդեցի՞ր: Ապրե՛ս:

ԳԵՏԱԿՆ ՈՒ ԳՆԴԱԿԸ

Գնդակը գլորվում էր դաշտերով: Հանդիպեց մի աղջկա: Աղջիկը վերցրեց նրան և տարավ տուն: Դա տեսավ գետակը և տխրեց: Գնդակը այնքան տխրել էր դրա համար. չէ՞ որ ինքը հանգիստ գլորվում էր դրսում, խաղում գետակի հետ, իսկ հիմա ընկած է աղջկա տանը: Եվ մի անգամ գնդակը պատուհանից փախչում է գետակի մոտ: Գետակը տանում է նրան մի բարի աշխարհ, որ էլ ոչ ոք գնդակին չբռնի:

Փորձիր շարունակել.

Այդ բարի աշխարհում _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Գրիր աշխարհի ամենակարևոր բառերը.

_____

_____

ՆԱՄԱԿ ՈՒԼԻԿԻՆ

Սիրելի ուլիկ ջան: Երբ ես կարդացի քո մասին, իմ տրամադրությունը շատ բարձրացավ: Երբ ես կարդում էի և հասա այն մասին, որ գայլը դուռը թակում է, ես շատ վախեցա, որ դու դուռը բաց կանես, և քո մայրը կտխրի: Բայց բախտս բերեց, որ դու դուռը բաց չարիր, և քո մայրը չտխրեց:

Արի նամակ գրենք գայլին, լա՞վ:

ՆԱՄԱԿ ԳԱՅԼԻՆ

Այստեղ գրիր գայլի հասցեն.

Իսկ այստեղ գրիր քո հասցեն.

Այստեղ գրիր պոկավոր բառեր.

Իսկ այստեղ գրիր գայլ բառեր.

ՈՒՂՏԸ ԵՎ ՓՈՒՇԸ

Անապատով ուղտերի քարավան էր գնում: Նրանք բոլորն էլ հոգնած ու քաղցած էին: Մի ուղտ ետ մնաց մյուսներից, որ ուտելիք փնտրի, հանկարծ մի փուշ տեսավ: Նա ասաց.

- Ա՛յ խոտ, դու շատ ես փշոտ, բայց ես էլ շատ քաղցած եմ, ստիպված պետք է քեզ ուտեմ:

Այդ օրվանից անապատի երկար ճանապարհներին ուղտերը միայն փուշ են ուտում:

Հորինիր.

ԻՆՉՈ՞Ւ Է ՈՒՂՏԸ ՃՈՄՌՎԱԾ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Շարունակիր.

քաղցած ուղտ

քաղցած _____

քաղցած _____

քաղցած _____

դեղին անապատ

_____ *անապատ*

_____ *անապատ*

_____ *անապատ*

ԱՂՋԻԿԸ ԵՎ ԱՐԵՎԸ

Մի աղջիկ է լինում, անունը՝ Արևիկ: Ինքն էլ արևի նման գեղեցիկ է լինում՝ խոշոր աչքերով ու կարմիր թշերով: Ամբողջ օրը Արևիկը խաղում է դրսում, իսկ երբ երեխա չի լինում,նա սկսում է պահմտոցի խաղալ արևի հետ: Երբ ձմեռ է գալիս, Արևիկը վերցնում է իր գունավոր մատիտները և սկսում է նկարել մեծ ու փոքր արևներ:



Կարո՞ղ ես շարունակել.

արևի նման գեղեցիկ

_____ *խորամանկ*

_____ *ուժեղ*

_____ *վախկոտ*

_____ *չարաճճի*

_____ *շատախոս*

_____ *խելացի*

_____ *ճարպիկ*

_____ *բարի*

_____ *քաղցր*

_____ *խոշոր*

Կարո՞ղ ես սա էլ շարունակել.

հեռախոսի նման _____

աթոռի նման _____

բաժակի նման _____

փուչիկի նման _____

պայուսակի նման _____

գրիչի նման _____

Գրիր տաք բառեր.

_____

_____

Հիմա գրիր սառը բառեր.

_____

ԵՍ Ի՞ՆՉ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ

Ես նման եմ փիսիկի, որովհետև հեզիկ-նազիկ եմ: Ես նման եմ նապաստակի, որովհետև նապաստակները ունեն երկար ականջներ, իսկ ես ունեմ երկար մազեր: Որ կապում եմ, նապաստակների ականջների են նմանվում:

Իսկ դո՞ւ ինչ կենդանու ես նման: Ինչո՞ւ:

Կարո՞ղ ես գրել:

Ի՞ՆՉ ԿԵՆԴԱՆՈՒ ԵՄ ԵՍ ՆՄԱՆ

Ի՞ՆՉ ԿԵՆԴԱՆՈՒ Է ՆՄԱՆ ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ...

Բաց թողնված բառերի փոխարեն պետք եկած նկարը նկարիր և կարդա:



ծաղիկ



բարև

ոզնի



անտառ

Մի կար, մի բարի : Այնտեղ շատ կային: Մի օր ելավ և տվեց: շատ կարմրացան, և նրանք էլ ասացին՝

Այդպես նրանք բարեկամացան:

Հիմա արտագրիր, լա՞վ:

Ստացվե՞ց: Հետաքրքիր էր, չէ՞:

Հիմա փորձիր ինքդ հորինել այդպիսի առաջադրանք.

Ստացվե՞ց: Առաջարկիր ընկերոջդ:

ԵՍ ԵՎ ՁՅԱՆ ՓԱԹԻԼԸ

Ձյուն էր գալիս: Սպիտակ աստղիկները պարելով իջնում էին ներքև: Այնպես լավ էր բակում: Ես ուզում էի ձեռքերով բռնել ճերմակաթև թիթեռնիկներին: Նրանք խռոված հալվում էին: Հանկարծ ես տեսա մի խոշոր ու մեծ փաթիլ: Դա իմ փաթիլն էր: Ես դուրս հանեցի լեզուս, և սառը փաթիլը հալվեց լեզվիս ծայրին: Նա երևի ինձ մի բան էր ուզում ասել: Տեսնես ի՞նչ էր ասելու:

Ի՞նչ էր ասելու փաթիլը.

_____

_____

_____

Փորձիր շարունակել.

փափուկ ձյուն

_____ *ձյուն*

_____ *ձյուն*

_____ *ձյուն*

պայծառ աստղիկներ

_____ *աստղիկներ*

_____ *աստղիկներ*

_____ *աստղիկներ*

խոշոր փաթիլ

խոշոր _____

խոշոր _____

խոշոր _____

ճերմակաթև թիթեռնիկներ

ճերմակաթև _____

ճերմակաթև _____

Հիմա արտագրիր ճերմակ բառերը.

_____

_____

ԻՆՉՈՒ Է ԱՐԵՎԸ ԼԱՑ ԼԻՆՈՒՄ

Մի օր քամին արևին կանչեց դուրս: Բայց արևի մայրիկը չթողեց: Արևը շատ խնդրեց մայրիկին, որովհետև արևին դրսում սպասում էր քամին: Արևը քամուն շատ էր սիրում, որովհետև քամին արևի միակ ընկերն էր: Այդպես էլ մայրիկը արևին դուրս չթողեց, ասելով՝ մութ է: Արևը սկսեց լացել: Արցունքները դարձան ջրի կաթիլներ և անձրև դարձած իջան ցած:



Փորձիր շարունակել.

քամու պես _____

արևի պես _____

անձրևի պես _____

ուսուցչի պես _____

հայրիկի պես _____

քույրիկի պես _____

եղբոր պես _____

փնթփնթան, ինչպես _____

ծիծաղելի, ինչպես _____

չիկչիկան, ինչպես _____

թափթփված, ինչպես _____

կարմանալի, ինչպես _____

կնգկնգան, ինչպես _____

կտկտան, ինչպես _____

Հիմա մայրիկ բառեր գրիր.

_____

_____

Այստեղ բալիկ բառեր գրիր.

_____

ԱՆԶԳՈՒՅՇ ԲՈՒՆ

Մի անգամ բուի ծննդյան օրը խլուրդը մի տուփ լուցկի նվիրեց: Բուն անզգուշությամբ այն վառեց և հրդեհեց ամբողջ անտառը: Այրվեցին բոլոր կենդանիները և ծառերը: Այդ օրվանից անտառի հոգին անիծեց բուին, որ նա միայն գիշերները տեսնի: Եվ այդպես էլ եղավ. բուն մինչև օրս էլ որսի է դուրս գալիս միայն գիշերները:

Կպատմե՞ս քո ծննդյան օրվա մասին.

ԻՄ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Հիմա գրիր՝ ի՞նչ ես ուզում նվեր ստանալ, և նկարիր դրանք:

ԺԼԱՏՆ ՈՒ ԱՐԵՎԸ

Արևը մի գեղեցիկ աղջիկ էր: Նա ամեն օր թռչկոտելով ուրախ-ուրախ գնում էր, մարդկանց տաքացնում: Այդ մարդկանց մեջ կար մի ժլատ մարդ: Նա նախանձում էր, որ արևը բոլորին է տաքացնում: Եվ նա որոշում է գողանալ: Ժլատը վերցնում է մի պարկ, որ արևին գողանա: Արևը թևեր է առնում և բարձրանում երկինք: Ու մինչև հիմա նա այնտեղ է, որ հավասար տաքացնի մարդկանց:

Ի՞նչն է միայն քոնը:

Ի՞նչն է, որ քոնը չէ:

Ի՞նչն է, որ միայն քոնը չէ:

Այստեղ գրիր բառեր, որոնք մայրիկդ է շատ սիրում.

ԱՄՊ-ՇՆԻԿԸ

Մի անգամ մի ամպ շնիկի ձև ստացավ: Նա իջավ ցած, կախվեց դաշտի վրա և անձրև թափեց: Մարդիկ կարմացան, որ ամպը շնիկ է դարձել, իջել ցած և դեռ անձրև էլ է բերում: Մարդիկ կային, որ գիտեին, թե շնիկը անձրև չի բերում, այլ մի ամպիկ՝ վերևից: Ամպ-շնիկը նորից իր դեմքը ստացավ և բարձրացավ երկինք: Մարդիկ արդեն հասկացան, որ ամպերն ամեն ինչ կարող են դառնալ:

Կարո՞ղ ես շարունակել.

ամպ շնիկը, ամպոտ շնիկը _____

_____

_____

_____

Դրանցից մեկը դարձրու վերնագիր և հորինիր պատմություն.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հիմա գրիր բառեր, որոնց մեջ ծառ կա.

_____

_____

ՊԱՐԾԵՆԿՈՏ ԳԵՏԱԿԸ

Կար-չկար մի պարծենկոտ գետակ: Այդ գետակը ամբողջ օրը վազում էր ու պարծենում.

- Ես բոլորից ուժեղ եմ ու գեղեցիկ, բոլորը ինձանից վախենում են:

Եվ վազելով հասավ ծովին: Ծովը պարծենկոտին առավ իր գիրկը ու կամաց ականջին շշնջաց, որ մյուս անգամ չպարծենա:

Պարծենկոտը լռեց, որովհետև իրենից ուժեղն էլ կար:

Ո՞ր պատմության մեջ ես հանդիպել մի ուրիշ պարծենկոտի:

Կարո՞ղ ես գրել վերնագիրը.

Դու սա էլ կարող ես շարունակել.

Մրջյունն ավելի մեծ է, քան _____

Կատուն ավելի մլավան է, քան _____

Փիղն ավելի փոքր է, քան _____

Ձյունն ավելի տաք է, քան _____

Անձրևն ավելի թաց է, քան _____

Ծովն ավելի փոքր է, քան _____

Սարն ավելի ցածր է, քան _____

Արևն ավելի սառն է, քան _____

Աշունն ավելի քիչ գույներ ունի, քան _____

Նապաստակն ավելի քաջ է, քան _____

Գրիր բառեր, որոնց մեջ ջուր կա.

_____

_____



ԳԱՐՆԱՆ ԵՎ ՁՄՌԱՆ ԿՌԻՎԸ

Մի օր ձմռան վերջն էր, բայց ձմեռը չէր գնում: Գարունը եկավ, և նրան տեղ չկար: Գարունը շատ բարկացավ և ասաց.

- Ա՛յ գիժ ձմեռ, գնա այստեղից, քո հերթը չէ:

Եվ նրանք սկսեցին կռվել: Մի ծաղիկ այդ գոռգոռոցից վեր ելավ և ասաց.

- Ինչո՞ւ եք կռվում, ա՛յ ձմեռ ու գարուն:

Ձմեռը կարմացած գնաց իր տունը:



Հորինիր և նկարիր

ԶԱՐՄԱՑԱԾ ՁՄԵՌԸ

Իսկ հիմա գրիր այն բառերը, որոնք կապ ունեն ձմռան հետ.

ԳԱՐՈՒՆ

Երբ գարունը եկավ, արևը դուրս եկավ: Նա շատ գեղեցիկ էր, նրա աչքերը փայլում էին, նա շատ ժպտացող, երգող, պարող արև էր: Երբ նա դուրս էր գալիս, բոլոր երեխաները նրան դիմավորում էին: Նրանք ուրախ-ուրախ խաղում էին: Երբ գիշերը գալիս էր, արևը երեխաներին ցտեսություն էր ասում, իսկ առավոտը երեխաներին բարի լույս ու բարի օր էր տալիս իր ճառագայթներով:



Նկարիր այս պատմության արևին:

Կարո՞ղ ես շարունակել.

շատ - քիչ

ուրախ - տխուր

մեծ - _____ *գիշեր* - _____

արագ - _____ *արև* - _____

ուժեղ - _____ *գլուխ* - _____

քաղցր - _____ *ջուր* - _____

գեղեցիկ - _____ *քար* - _____

բարձր - _____ *մրջյուն* - _____

կարճ - _____ *երկինք* - _____

բարի - _____ *ծառ* - _____

լայն - _____ *թռչուն* - _____

Այստեղ գրիր արևի գույն ունեցող բառեր.

_____

_____

ԻՄ ՍԻՐԱԾ ԳՈՒՅՆԸ

Ինձ համար ամեն ինչ վարդագույն է: Ես նկարում եմ վարդագույն ամպեր, վարդագույն նավեր, վարդագույն սարեր, վարդագույն ծաղիկներ, շա՜տ-շա՜տ ծաղիկներ: Մի անգամ ես նստեցի վարդագույն ամպիկի վրա և թռա բարձր, մինչև վարդագույն արևը: Վարդի հոտ էր գալիս: Իմ կողքով թռչում էին վարդերով ծածկված ամպիկները: Անձրևի վարդագույն արցունքները կաթկթում էին երեսիս: Ես արթնացա: Այ քեզ հրա՜շք: Երակս էլ վարդագույն էր:

Այս էջը ներկիր քո ուզած գույներով:

Հիմա դրանց վրա գրիր այդ գույնի բառեր:

ԱՐԵՎՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ

Ասում են, որ մի ժամանակ արևը մեկ նման աղջիկ է եղել, մի գեղեցիկ, շեկլիկ ու կապուտաչյա աղջիկ, բայց չար կախարդը նրան կախարդել ու դարձրել է արև: Արևը ինչքան փոքրիկ աղջիկ է տեսնում, հիշում է իր մանկությունը: Նա սիրում է բոլոր փոքրիկ աղջիկներին: Եվ նա մտերմացավ մի փոքրիկ աղջկա հետ: Նա ամեն առավոտ գնում էր, նրան իր շողերով արթնացնում: Աղջիկը շատ էր սիրում նրա շողերը: Երկար ժամանակ նա խաղում էր արևի շողերի հետ:

Շարունակիր.

գեղեցիկ-տգեղ

շեկլիկ - _____ *փոքրիկ* - _____

աղջիկ - _____ *առավոտ* - _____

արթնանալ - _____ *սիրել* - _____

խաղալ - _____ *գնալ* - _____

փոքրանալ - _____ *հիշել* - _____

Իսկ հիմա սա շարունակիր.

մտերմանալ աղջկա հետ

մտերմանալ _____

մտերմանալ _____

մտերմանալ _____

Այստեղ արտագրիր բարձրահասակ բառերը.

_____

_____

Իսկ այստեղ արտագրիր ցածրահասակ բառերը.

_____

_____

ՈՒՌԵՆԻՆ ԵՎ ԵՐԱԺԻՇՏ ԱՐԱԳԻԼԸ

Մի օր արագիլը թռչում էր գյուղում և տեսավ, թե ինչպես է ուռենին կախել իր ճյուղերը: Նա ասաց.

- Ուռենի՛, դու ինչո՞ւ ես ճյուղերդ կախել:

Ուռենին ասաց.

- Որովհետև նրանք տխուր են:

Արագիլը սկսեց երգել: Ուռենու ճյուղերը վեր բարձրացան, և երբ երգը դադարեց, նրանք նորից կախվեցին: Սակայն արագիլին ուռենին դուր էր գալիս նաև կախված ճյուղերով: Եվ արագիլը այլևս չերգեց:



Ինչպիսի՞ն է այս ուռենին:

Ինչպիսի՞ն է այս արագիլը:

Այստեղ գրիր երգող բառեր.

ԱՐԵՎԸ ԵՎ ԱՌՎԱԿ-ԱՂՋԻԿԸ

Մի անգամ առվակ-աղջիկը խոսում էր, բայց արևը դեռ չկար: Նա շատ էր տխրում, բայց արևը չէր երևում: Իսկ երբ այդ նկատեց արևը, շատ ուրախացավ, անմիջապես դուրս եկավ ամպի տակից և իր փայլուն շողքերը գցեց աշխարհի և առվակ-աղջկա վրա: Եվ առվակ-աղջիկը ուրախությունից սկսեց ավելի ու ավելի արագ քչքչոցով հոսել: Հանկարծ արևը նորից անհետացավ, նրան փոխարինեց անձրևը: Առվակ-աղջիկը տխրեց, որ իր կուլալ ջրին է խառնվել այդ անձրևի պղտոր ջուրը:



Այստեղ նկարիր առվակ-աղջկան.

Ինչպիսի՞ն է առվակ-աղջիկը:

Այստեղ գրիր չարաճճի բառեր.

ԹԵ Ի՛ՆՉ ՊԱՏԱՀԵՑ, ԵՐԲ ԱՔԼՈՐԸ ԾՈՒՂՐՈՒՂՈՒ ՉԿԱՆՉԵՑ

Մի աքլոր էր ապրում: Նա ամեն առավոտ ծուղրուղու էր կանչում: Նրա ձայնից արևն էր կարթնում: Արևի շողերը կարթնեցնում էին ծտերին ու բոլոր կենդանիներին: Մի օր էլ կենդանիները բարկացան աքլորի վրա.

- Ինչո՞ւ ես ամեն առավոտ ծուղրուղու կանչում, չես թողնում քնենք:

Աքլորը նեղացավ և մյուս առավոտ ծուղրուղու չկանչեց: Արևը չէր կարթնել: Կենդանիները հասկացան, որ առանց աքլորի ու արևի չեն կարող ապրել:



Փորձիր շարունակել.

աքլոր - աքաղաղ

առավոտ _____ *հրճվանք* _____

կարթնել _____ *ճերմակ* _____

բարկանալ _____ *խոշոր* _____

նեղանալ _____ *գեղեցիկ* _____

Այստեղ այն բառերը գրիր, որոնք աքաղաղի հետ կապ ունեն.

_____

_____

ԾԱՂԻԿԸ, ՄԵՂՈՒՆ ԵՎ ԱՐԵՎԸ

Օրերից մի օր մեր այգում սիրուն ծաղիկ ծաղկեց՝ գեղեցիկ ու բուրմունքով: Ծաղիկը արևի տաքությունից թոռոմել էր: Մեղուն տկտկալով թռավ այգին, տեսավ սիրուն ծաղկին և ասաց արևին.

- Սիրո՛ւն արև, այդքան ուժեղ մի տաքացրու, ծաղիկը թոռոմել է:

Արևը ժպտաց, մտավ ամպի ետևը և անուշ քուն մտավ:

Սկսվեց անձրևը, ծաղիկը բացվեց ու ժպտաց բոլորին: Մեղուն վազեց, եկավ և նստեց ծաղկի վրա: Դուրս եկավ նորից արևը և կապեց սիրուն ծիածան:



Նայիր թվերին և արտագրիր նախադասությունը.

Այս պատմության բառերով կազմիր նոր նախադասություններ.

Այստեղ գրիր մեղվի հետ կապ ունեցող բառեր.

ԹԻԹԵՌԸ

Գարնանային մի պայծառ, գեղեցիկ ու հիանալի օր էր: Այդ օրը ծնվեց փոքրիկ թիթեռնիկը: Նա այնքան գեղեցիկ էր, որ կարծես ծիածանից էր ծնվել: Թռչուններն ու ծաղիկները բարի նախանձով էին նայում թիթեռի գույնզգույն թևիկներին: Մինչև երեկո թիթեռը ուրախ թռչում էր ծաղկից ծաղիկ: Երբ մութն ընկավ, թիթեռի աչիկները փակվեցին: Ծաղիկները խղճացին և շատ ափսոսեցին գեղեցիկ թիթեռին:

Արտագրիր՝ բաց թողնելով գծված բառերը.

Հիմա կարդա երկուսն էլ:

Այստեղ գրիր պատմության գույնզգույն բառերը.

ԵՐԳՈՂ ԹԻԹԵՌԸ

7

Մի անգամ թիթեռը երգում էր: Նա այնքան անուշ էր
1 2 8 9 10 11 12
երգում: Մի տղա եկավ նրա մոտ և ասաց.
13 3 4 15 14
- Դու շատ լավ ես երգում:

Եվ թիթեռը սկսեց երգել: Տղան շատ ուրախացավ. թիթեռը
5 6 16 17
շատ լավ էր երգում: Նա երգում էր ծաղկի մասին:

Հերթականությամբ գրիր թվերը.

Արտագրիր թվերով ստացված պատմությունը.

Կարո՞ղ ես վերնագիր դնել նոր պատմությանը.

Այստեղ գրիր ծաղկի հետ կապ ունեցող բառեր.

ԵԿԵՔ ԽՈՍԵՆՔ ՈՉՆՉԻ ՄԱՍԻՆ

Լինում է, չի լինում, ոչինչ չի լինում: Միայն մի գդալ է լինում, այդ գդալն էլ չի լինում: Մեկ էլ մի ինքնաթիռ է լինում: Այդ ինքնաթիռը գնում է, որպեսզի նատի մի բակ-կաթոռի, բայց ընկնում է ցած ու ջարդվում: Իսկ բակկաթոռը չկա, բայց ինքնաթիռը կա: Ինքնաթիռը լաց է լինում, ինքնաեռը չի եռում: Իսկ հղջիկը չկա: Խանութներում ոչինչ չկա: Ոչինչ, ոչինչ, վատ օրեր են, կուգան ու կերթան: Ոչնչից մենք պիտի ամեն ինչ ստեղծենք: Ու ոչինչը շուտով կդառնա ամեն ինչ:



Այստեղ նկարիր ոչ մի բան.

Շատ նման ստացվեց, ապրե՛ս:

Իսկ այստեղ գրիր.

ՈՉ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՉ ՄԻ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ

ԽՌՈՎԱԾ ԱՐԵՎԸ

Ժուկով-ժամանակով մի արև կար: Մի օր մութը գնաց արևի մոտ և ասաց.

- Արև՛, արի մենակ դու մի հսկիր երկիրը: Դու հսկիր, հենց որ քո հերթը անցնի, դու գնա, ես գամ, հետո ես գնամ, դու գաս:

Արևը չի համաձայնվում: Ասում է.

- Մինչև հիմա ես եմ հսկել, ես էլ կմնամ:

Մութը կայրանում է.

- Ես կգնամ, ինձ հետ լուսին կբերեմ, և լուսինը քեզ կսառեցնի:

Արևը վախենում է, խռովում, և դրանից հետո հենց մութը գալիս է, արևը խռովում է, մայր է մտնում:

Ուզո՞ւմ ես՝ արտագրիր խոսքերը.

Ուզո՞ւմ ես՝ նոր խոսքեր գրիր.

Ի՞նչ ասաց մութը.

Ի՞նչ պատասխանեց արևը.

Հիմա գրիր մութ բառեր.

Իսկ հիմա գրիր պայծառ բառեր.

ԹՐԹՈՒՐԸ

2 4 6 10 8 14
Կար-չկար մի թրթուր կար: Մի օր թրթուրը որոշեց աշ-
16 18 20 22 24 26 28 12 30
խարհը տեսնել: Ի՞նչ է, պահա՞ղ էր, որ ամբողջ օրը նստեր
32 34 36 38 40 42 44 46
տանը: Եվ գնաց: Ամեն ինչ տեսավ աշխարհում: Երբ
48 50 52
վերադարձավ տուն, մի տոպրակ գործեց, մտավ մեջը: Մի
54 56
տարի հետո դարձավ թիթեռ:



Ի՞նչ տեսավ թրթուրը աշխարհում:

Այստեղ գրիր թվերը հերթականությամբ.

Հիմա նայիր թվերին և արտագրիր ստացված պատմությունը.

Նոր պատմության համար վերնագիր գտիր.

ԾԱՂԻԿՆ ՈՒ ԱՄՊԻԿԸ

Շատ առաջ ոչ մի ծառ ու ծաղիկ չի եղել, միայն քարեր են եղել: Մի օր էլ քարի միջից դուրս եկավ մի կապուտաչյա ծաղիկ: Նա շատ նուրբ և նուրբ մարմին ուներ: Նա իր գեղեցիկ գլուխը բարձրացրեց վերև ու տեսավ, որ երկինք է: Այդ ժամանակ նա մի թերթիկ նվիրեց ամպիկին: Ամպիկն ուրախացավ և դարձավ մտածեց, որ ինքը նույնպես գեղեցիկ է: Նայեց իրեն և ուրախացավ, որ մարդիկ իրենով էլ են զմայլվելու:



ԱՄԵՆԱՄԵԾ ՀՐԱՇՔԸ

Մի օր արևը ուզեց լողանալ գետակի մեջ: Եվ գնաց, շորերը հանեց, մտավ գետակի մեջ: Մարդիկ սկսեցին հիանալ նրա մերկությամբ: Քանի որ նա ամաչկոտ աղջիկ էր, նա իր ճառագայթներով փակեց իր մերկությունը, որ մարդիկ չտեսնեն: Երբ նա լողացավ, պրծավ, ուզեց դուրս գալ, բայց մարդիկ նորից նայում էին նրան: Արև քույրիկը չգիտեր՝ ինչ աներ: Նա մի քիչ մտածեց-մտածեց և որոշեց, որ այդ օրվանից ոչ ոքից չամաչի: Նա դուրս եկավ, բարձրացավ երկինք: Լուսավորեց աշխարհը:

Հիմա ինքդ հորինիր պատմություն.

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՀՐԱՇՔ

Այստեղ գրիր կախարդական բառեր.

Իսկ այստեղ գրիր սովորական բառեր.

ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Աղվեսները հավաքված մտածում էին, թե ո՞վ կգնա՝ աքաղաղի միս բերի: Մեկը ասում է.

- Դու գնա, դու ավելի խորամանկ ես:

Նա էլ անխելք-անխելք գնում է, տեսնում է՝ ուլիկը արածում է, տատը կով է կթում: Աղվեսը երբ ուզում է աքաղաղին գողանալ, տատը պոչը կացնով կտրում է: Աղվեսը լալիս է, խորամանկություն է անում, ասում է, որ ուլիկին գայլերը կերան: Տատը պոչը բաց է թողնում ու վազում: Աղվեսը պոչը արագ վերցնում է ու պուկ՝ փախչում:

Ընկերները տեսնում են և անվանում պոչատ աղվես:

Այս պատմության բառերով ուրիշ պատմություն գրիր.

Այստեղ արտագրիր շնչող բառերը.

Իսկ այստեղ գրիր անշունչ բառերը.

ՄԻ ԱՆԳԱՄ ԱՐԵՎԻ ՄՈՏ

Մի անգամ ես նստած էի: Հետո մի բան պատահեց: Ես հայտնվեցի մի լուսավոր ու շոգ տեղ: Ես մի տեսակ վախեցա, բայց հետո ընտելացա: Այնտեղ ես տեսա արևին և իր երեխաներին: Արևի մոտ էր նաև լուսինը: Նրանք շատ տխուր էին, որովհետև վաղը լինելու էր անձրև, և արևի արքայությունը անհետանալու էր: Ես էլ շատ տխրեցի, բայց հետո իմ գլխում մի միտք առաջացավ: Ես մոտեցա արևին և ասացի, որ նա չտխրի: Հետո ես ամպին շատ խնդրեցի, որ նա մի անգամ էլ համբերի: Ամպը ինձ լսեց և այս անգամ էլ համբերեց: Ես շատ ուրախացա, որ օգնեցի արևին: Եվ ես վերադարձա տուն:

Պատմիր արևի մասին:

Արտագրիր թաց բառերը.

Իսկ հիմա արտագրիր չոր բառերը.

ԻՆՉՈ՞Ի Է ՁՅԱՆ ՓԱԹԻԼԸ ՍՊԻՏԱԿ

Ամեն մի եղանակ ունի իր գույնը: Ձմռան գույնն էլ սպիտակն է: Թե ինչո՞ւ է ձյան փաթիլը սպիտակ՝ հիմա կասեմ: Մի անգամ տարվա չորս եղանակն էլ ուզեցին միասին դուրս գալ: Բայց արի ու տես որ ամեն մեկն ուզում էր՝ ինքն իշխի: Ամենից ուժեղը ձմեռն էր, որ ուզում էր անպայման միշտ կառավարել: Եվ սկսվեց վեճը տարվա եղանակների միջև: Այս բոլորը լսելով՝ Աստված բարկացավ և ասաց, որ այսուհետև իրար չտեսնեն և իրար կարոտ մնան: Իսկ ձմեռից, որը ոչինչ չէր ուզում կիջել, Աստված վերցրեց բոլոր գույները և թողեց միայն մի գույն՝ սպիտակը: Ահա թե ինչու է ձյան փաթիլը սպիտակ:

Ինչո՞ւ են նապաստակի ականջները երկար, իսկ պոչը՝ կարճ:

Ինչո՞ւ վարդը փշեր ունի:

Որտե՞ղ են ապրում տարվա եղանակները:

Ինչո՞ւ են աստղերը շատ, իսկ լուսինը՝ մեկը:

Ի՞նչ գույն ունեն բարի խոսքերը:

Ինչո՞ւ մարդը երկու ականջ ունի, մեկ բերան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գայլ ուտող նապաստակը (Մարիամ Սեֆերյան, 1-ին դաս., 1991 թ.) 4
Ամպ-փուչիկը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991 թ.) 6
Լուսինն ու ծառը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991 թ.) 8
Փիղն ու մուկը (Մհեր Բաղալյան, 1-ին դաս., 1991թ.) 10
Փիղը (Դավիթ Հարությունյան, 2-րդ դաս., 1991թ.) 12
Մարդուկը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 14
Լռություն (Թամար Քալաշյան, 1-ին դաս., 1991թ.) 16
Ինչից են պատրաստված տղաները (Հակոբյան Լիանա, 1-ին դաս., 1991թ.) 18
Գարուն է սիրուն (Թամար Քալաշյան, 1-ին դաս., 1991թ.) 20
Լուսինը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 22
Արև-աքաղաղը և աքաղաղ-արևը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 24
Նկարը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 26
Եթե ես մեծ լինեի (Մարիամ Սեֆերյան , 1-ին դաս., 1991թ.) 28
Թիթեռն ու ծառը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 30
Լուսինն ու ծիտը (Վարդան Աբրահամյան, 1-ին դաս., 1991թ.) 32
Հրաշքը (Թամար Քալաշյան, 1-ին դաս., 1991թ.) 34
Թարս ցույց տվող հեռուստացույցը (Արամայիս Դարբինյան, 1-ին դաս., 1991թ.) 36
Մի օր ես ռադիոն միացրի... (Արսեն Պողոսյան, 1-ին դաս., 1991թ.) 38
Գետակն ու գնդակը (Համլետ Հայրապետյան, 1-ին դաս., 1991թ.) 40
Նամակ ուլիկին (Անահիտ, 2-րդ դաս.,1989թ.) 42
Ուղտը և փուշը (Արամիկ Բաբայան, 1-ին, 1991թ.) 44
Աղջիկը և արևը (Սոնա Պետրոսյան, 2-րդ դաս., 1991թ.) 46
Ես ինչ կենդանի եմ (Լիանա Հակոբյան, 1-ին դաս, 1991թ.) 48
Պատմություն նկարներով (Համասփյուռ Քիշմիրյան, 2-րդ դաս., 1991թ.) 50
Ես և ձյան փաթիլը (Լիլիթ Վարդանյան, 1-ին դաս., 1989թ.) 52
Ինչո՞ւ է արևը լացում (Վարդան Աբրահամյան, 1-ին դաս, 1991թ.) 54
Անկգույշ բուն (Արամիկ Բաբայան, 1-ին դաս., 1991թ.) 56
Ժլատն ու արևը (Պարույր Խաչատրյան Խաչատրյան, 1-ին դաս., 1991թ.) 58
Ամպ-շնիկը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 60
Պարծենկոտ գետակը (Արփինե Մկրտչյան, 1-ին դաս., 1991թ.) 62
Գարնան և ձմռան կռիվը (Լիանա Մարգարյան, 1-ին դաս., 1991թ.) 64
Գարուն (Քալաշյան Թամար, 1-ին դաս., 1991թ.) 66
Իմ սիրած գույնը (Լիլիթ Վարդանյան, 1-ին դաս., 1989թ.) 68
Արևն ու աղջիկը (Լիլիթ Բոչոլյան, 2-րդ դաս., 1991թ.) 70
Ուռենին և երաժիշտ արագիլը (Քրիստինե Կարապետյան, 1-ին դաս., 1991թ.) 72
Արևը և առվակ-աղջիկը (Լուսինե Գևորգյան, 2-րդ դաս, 1991թ.) 74
Թե ի՛նչ պատահեց, երբ աքլորը ծուղրուղու չկանչեց
(Գևորգ Փաշայան, 1-ին դաս., 1991թ.) 76
Ծաղիկը, մեղուն և արևը (Սոնա Աբրահամյան, 1-ին դաս., 1990թ.) 78
Թիթեռը (Էդգար Հովհաննիսյան, 1-ին դաս., 1991թ.) 80
Երգող թիթեռը (Անահիտ Գասպարյան, 1-ին դաս, 1991թ.) 82
Եկեք խոսենք ոչնչի մասին (Սուրեն Մկրտչյան, 3-րդ դաս., 1991թ.) 84
Խռոված արևը (Արմինե Կիրակոսյան, 1-ին դաս., 1991թ.) 86
Թրթուրը (Նարինե Թերպյան, 1-ին դաս., 1991թ.) 88
Ծաղիկն ու ամպիկը (Զավեն Մակարյան, 1-ին դաս., 1991թ.) 90
Ամենամեծ հրաշքը (Արարատ Գևորգյան, 1-ին դաս., 1991թ.) 92
Պոչատ աղվեսը (Մանան Գասպարյան, 1-ին դաս., 1991թ.) 94
Մի անգամ արևի մոտ (Անուշ Գալստյան, 1-ին դաս., 1991թ.) 96
Ինչո՞ւ է ձյան փաթիլը սպիտակ (Իրինա Գրիգորյան, 2-րդ դաս., 1991թ.) 98